

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍԿԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Անցումային տնտեսություն վարող երկրներում, ինչպիսին դեռևս նաև Հայաստանի Հանրապետությունն է, տնտեսական աճի ապահովման գործում կարևոր նշանակություն ունի բանկային համակարգի զարգացումը՝ միջազգային փորձը: Մասնավորապես, տվյալ համակարգի գործունեության վրա իր դրական ազդեցությունն է թողնում ֆինանսական ռիսկերի ճշգրիտ և արդյունավետ կառավարումը: Ուստի այդ առումով, ֆինանսական ռիսկերից բանկային համակարգում իրենց կարևոր տեղն ունեն վարկային, արտարժույթային, իրացվելիության, գնային և տոկոսադրույքների ռիսկերը: Այսպես, վերջին երկու (2008¹009թթ.) տարիների փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ֆինանսական ճգնաժամի պայմաններում էլ ՀՀ առևտրային բանկերում ռիսկերի մի մասը գործել են կառավարելի շրջանակներում, և դրանց կայունությունը չի խաթարվել: Մակայն, ի ապացույց պետք է նշել, որ սկսած 2008 թվականի 4-րդ եռամսյակից ներառյալ 2009 թվականը միայն փոքր-ինչ ավելացավ վարկային և արտարժույթային ռիսկերով պայմանավորված վնասների մեծությունը¹:

Միաժամանակ ուսումնասիրություններից պարզվում է, որ չնայած վերջին տարիներին արձանագրված վարկերի կտրուկ աճը զուգակցվել է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հետ, սակայն դրան համահունչ այնուամենայնիվ տեղի ունեցավ տրամադրվող վարկերի ռիսկի փոքր-ինչ վատացում՝ կապված չափատող վարկերի հետ, և արդյունքում 2009 թվականին վարկերի հանրագումարում հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկերի տեսակարար կշիռն ավելացավ 0.4 տոկոսային կետով: 2009 թվականի 1-ին կիսամյակից սկսած վարկային շուկայի աշխուժացումն աստիճանաբար նպաստեց առևտրային բանկերի կողմից կայուն եկամուտների ստացման սպասումների ձևավորմանը՝ կապված ՀՀ ԿԲ-ի կողմից որդեգրված ճիշտ քաղաքականության և վարկավորման գործընթացի արդյունավետ վարման հետ: Անհրաժեշտ է նշել նաև այն իրողությունը, որ վերոնշյալ վարկերի գծով 2009թ. 1-ին կիսամյակում դրանց տեսակարար կշիռը հասավ նույնիսկ մինչև 10%-ի, իսկ այնուհետ տարեվերջին ունեցավ նվազման միտում՝ 5.2%-ի չափով, կազմելով 4.8%: Միաժամանակ նախորդ տարիներին վարկային պորտֆելի արագ աճման տեմպը, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը նախադրյալներ էին ստեղծել վարկերի որակի վատթարացման համար: Մակայն պետք է նշել, որ տարբերություն վերջինիս, 2009 թվականին վարկերի տրամադրման և ետ վերադարձման գծով վատ երևույթներ չարձանագրվեց, մասնավորապես երկրի ներսում:


Հաշվի առնելով վարկային ռիսկի դերը՝ պարզվում է, որ վարկային ներդրումները 2009 թվականի ընթացքում 2008 թվականի նկատմամբ ավելացել են 23.9%-ով կամ 155.5 մլրդ. դրամով և կազմել են 806.2 մլրդ. դրամ: Միաժամանակ, 2009 թվականին, բացառությամբ սպառողական վարկերի, մյուս բոլոր ոլորտների վարկային ներդրումներում արձանագրվել է աճման միտում, նպաստելով ոչ միայն երկրի տնտեսական աճին, այլ նաև վերջին հաշվով բանկային համակարգի շարունակական զարգացմանը: Ընդհանուր առմամբ, եթե մինչև 2009

¹ ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը (զարգացումը, կարգավորումը և վերահսկողությունը), Երևան, 2009, էջ 41:

թվականը առևտրային բանկերի վարկավորման կառուցվածքում գերակշռում էին սպառողական վարկերը, ապա հաշվետու տարում գերազանցապես վարկավորվել է արդյունաբերության ճյուղը, ինչի արդյունքում էլ վարկային պորտֆելում կտրուկ մեծացավ այդ վարկերի տեսակարար կշիռը՝ 19.7%-ի չափով (տես գծապատկեր 1-ը)¹:

Գծապատկեր 1

Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը՝
ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Հանքարդյունաբերություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Արդյունաբերության ճյուղում տրամադրված վարկերն ավելացել են 71.2%-ով կամ 61.1 մլրդ. դրամով, գյուղատնտեսությունում՝ 21.1%-ով կամ 7.7 մլրդ. դրամով, շինարարությունում՝ 37.1%-ով կամ 14.7 մլրդ. դրամով, տրանսպորտի և կապի ճյուղում՝ 50.7%-ով կամ 5.2 մլրդ. դրամով, առևտրի ճյուղում՝ 10.2%-ով կամ 13.5 մլրդ. դրամով, հանրային սնունդի և սպասարկման այլ ոլորտներում՝ 30%-ով կամ 6.8 մլրդ. դրամով, հիփոթեքային վարկերում՝ 0.4%-ով կամ 0.3 մլրդ դրամով, այլ ոլորտներում՝ 30.0%-ով կամ 1.8 մլրդ. դրամով, իսկ սպառողական վարկերում արձանագրվել է նվազում՝ 21.8%-ի կամ 38.1 մլրդ. դրամի չափով :

Ելնելով վերոշարադրյալից կարող ենք փաստել, որ ՀՀ բանկային համակարգում ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի մեթոդի կենտրոնացվածության գործակիցը, հիմնականում ի հաշիվ բարձր տեսակարար կշիռ ունեցող սպառողական վարկերի նվազման, 2008 թվականի համեմատ իջել է 0.024 կետով և կազմել է 0.141:

Միաժամանակ, ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների կենտրոնացվածության մակարդակը նվազել է 2009 թվականի վերջի դրությամբ (գծապատկեր 1), քանի որ նույն տարվա սկզբին ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող սպառողական վարկերի ծավալը նույնպես իջել են, իսկ ավելի փոքր տեսակարար կշիռ ունեցող արդյունաբերության ճյուղի վարկերը կտրուկ ավելացել են:

Վարկային ռիսկի հետ կապված կարևորվում են ՀՀ բանկային համակարգի նորմատիվային ցուցանիշները, և ըստ գծապատկեր 2-ի՝ 2001 թվականի վերջի դրությամբ կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 28.4%, մեկ փոխառուի գծով ռիսկը առավելագույն չափի ցուցանիշը՝ նորմատիվային կապիտալի 15.9%-ը, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 104.5%-ը, բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 2.9%-ը, բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի

¹ Տես նույն տեղում, էջ 36:


² ՀՀ ԿԲ տեղեկագիր (հունվար), 2011թ. էջ., 74-77:

³ ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը (գարգացումը, կարգավորումը և վերահսկողությունը), Երևան, 2009, էջ 41:

առավելագույն չափի ցուցանիշը՝ 8.7%-ը: Այսինքն՝ վերոնշյալ ցուցանիշները վկայում են, որ այդ ռիսկերը կառավարելի շրջանակներում են:

Գծապատկեր 2

Նորմատիվային ցուցանիշները՝ ըստ բանկերի (31.12.2009 թ. դրությամբ)




Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ կարևորվում է նաև արտաբաժնային ռիսկը: Այսպես, 2008 թվականի կեսերից սկսած ազգային արժույթի արժեզրկման ճնշումների, բանկային համակարգից խնայողությունների արտահոսքի և դրամային ավանդները ԱՄՆ դոլարով փոխարինման գործընթացների հետևանքով, տվյալ համակարգում առաջացած արտաբաժնային իրացվելիության ու կապիտալի բավարարության հետ կապված ռիսկերը չեզոքացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2009 թվականի սկզբից մեծացրեց միջամտությունն արտաբաժնային շուկայում, փորձելով կայունացնել փոխարժեքը: Արդյունքում 2009թ. փետրվարին ՀՀ դրամի միջին անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 15.8%-ով: Այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքների տատանումների հետևանքով բանկային համակարգը արտաբաժնային վերագնահատման առումով ունեցավ 5.7 մլրդ. դրամի չափով վնաս, որը կազմել է նորմատիվային կապիտալի 2.2%-ը, նախորդ տարվա 0.4%-ի փոխարեն: Արտաբաժնային վերագնահատման եկամուտ են ապահովել 8, իսկ վնաս են ունեցել թվով 14 առևտրային բանկեր: Միաժամանակ, արտաբաժնային ռիսկի գնահատման V&5. մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2009թ. վերջի դրությամբ բանկային համակարգի արտաբաժնային վերագնահատման արդյունքում մեկօրյա հնարավոր վնասները 0.95 հավանականությամբ չեն գերազանցի 2 մլրդ. դրամը: Հատկանշական է նաև այն իրողությունը, որ ՀՀ բանկային համակարգն արտաբաժնային առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում հաշվետու տարում ապահովել է 13.8 մլրդ. դրամի չափով եկամտի ստացում, չնայած 2008 թվականի նկատմամբ նվազել է 5.7%-ով:

Առևտրային բանկերի գործունեության կարգավորման համար իրացվելիության ռիսկն ունի իր կարևոր տեղը, մասնավորապես ՀՀ բանկային համակարգի կողմից իրականացված ճիշտ վարկային քաղաքականության հետևանքով 2009թ. վերջին ակտիվների 29.5% հավելաճի տեմպը կրկնակի անգամ գերազանցեց վարկերի 14.0% հավելաճի տեմպին և, ինչի արդյունքում էլ զգալի մեծացավ այդ համակարգի իրացվելիության մակարդակը: Իրացվելիության ռիսկի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար ներկայացնենք ըստ առևտրային բանկերի 2009թ. դրությամբ իրացվելիության փաստացի նորմատիվային ցուցանիշները (տես գծապատկեր 3-ը)¹:

¹ ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը (գարգացումը, կարգավորումը և վերահսկողությունը), Երևան, 2009, էջ 43:

Իրացվելիության նորմատիվային ցուցանիշները՝ ըստ բանկերի (31.12.2009թ. դրությամբ)



Պարզվում է, որ տարվա ընթացքում ՀՀ բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների ծավալն աճել է 88.8%-ով, կամ բացարձակ առումով կազմել է 420.8 մլրդ. դրամ և արդյունքում ընդհանուր ու ընթացիկ իրացվելիությունների փաստացի նորմատիվային ցուցանիշներն ավելացել են համապատասխանաբար 10.6 և 37.7 տոկոսային կետերով՝ կազմելով 34.4% և 140.8%: Չնայած դրանք սահմանված նորմատիվներից բարձր են, սակայն վտանգ չեն պարունակում, մանավանդ որ 2009թ. բանկային համակարգը երկրից միջոցների արտահոսքի խնդրի առջև չկանգնեց:

Ֆինանսական ռիսկերից գնային ռիսկը ՀՀ բանկային համակարգում գնահատվում է բավականաչափ ցածր, և 2009թ. ընթացքում այդ ռիսկով պայմանավորված վնասներ գրեթե տեղի չի ունեցել: Միայն առևտրային նպատակներով ստացվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 6 մլն. դրամի վնաս, իսկ հիմնական միջոցների վերագնահատումից՝ 288 մլն. դրամի չափով վնաս: Անհրաժեշտ է նշել, որ ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում անհամեմատ փոքր է, և դրան համահունչ էլ գնային ռիսկը գնահատվում է բավականին ցածր: Իսկ ահա ՀՀ բանկային համակարգի կողմից 2009 թվականի վերջում համեմատաբար ռիսկային ոչ պետական արժեթղթերում իրականացված ներդրումները կազմել են 4.3 մլրդ. դրամ, որը նորմատիվային ընդհանուր կապիտալի 1.7%-ն է, և նշված արժեթղթերի գների նույնիսկ կտրուկ տատանումները էական վնաս չեն կարող պատճառել բանկային համակարգին:

ՀՀ բանկային համակարգում եկամտաբեր ակտիվների և ավանդների ներգրավման գործընթացում հույժ կարևոր նշանակություն ունի տոկոսադրույքի ռիսկը, քանի որ ակտիվների և պարտավորությունների միջին ժամկետայնությունը կարճատև է: Ուստի այդ առումով բանկային համակարգը շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների ժամանակ կարող է արձագանքել և վերանայել տոկոսադրույքները: Հատկապես այս հարցում ամենամեծ դերակատարումն ունի ՀՀ կենտրոնական բանկն իր վարած ճիշտ դրամավարկային քաղաքականության շնորհիվ: Պարզվում է, որ համաձայն տոկոսադրույքի ռիսկի դյուրացիայի մեթոդով իրականացված հաշվարկների, ընդհանուր շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կնվազի 1.5 մլրդ. դրամով կամ նորմատիվային ընդհանուր կապիտալի 0.6%-ի չափով:

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից վերլուծության արդյունքները, կարող ենք գալ այն հետևության, որ ֆինանսատնտեսական ճգնաժամից աստիճանաբար խուսափելու ու դրան համահունչ առևտրային բանկերի գործունեությունը կարգավորելու, դրա արդյունավետության ավելացմանը նպաստելու համար խիստ կարևորվում է բանկային համակարգի ֆինանսական ռիսկերի ճշգրիտ կառավարումը:

ՎԻԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոբանյանի ահվահ տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գր*

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏՃՕՆԱԺԱՄԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Համաշխարհային տնտեսության մեջ բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում հետճգնաժամային զարգացումների միտումները, ինչպես նաև առանձին երկրների տնտեսությունների վերականգնման արագությունը: Այս հիմնահարցի կարևորությունը պայմանավորված է այն մտահոգություններով, թե աշխարհի տնտեսությունը երբ կվերադառնա 2008թ. զարգացման մակարդակին:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից 2011 թվականի ապրիլ¹ ամսին հրապարակված «Համաշխարհային տնտեսության տեսլականը» զեկույցներում փորձ է արվել կանխատեսել համաշխարհային տնտեսության մինչև 2016թ. ընկած ժամանակաշրջանի զարգացման միտումները: Այս զեկույցում ուսումնասիրվել են հիմնականում համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունների վերականգնման միտումները, ինչպես նաև առաջ է քաշվել «երկու արագությամբ (L[^]o-Sբտոժ ^^^OV^^^» վերականգնման գաղափարը: Այսինքն՝ համաշխարհային տնտեսության վերականգնումը համաչափ բնույթ չի ստացել, որը հանգեցրել է միաժամանակ և՛ արագ, և՛ դանդաղ վերականգնման, մյուս կողմից վերականգնման հիմնահարցերի շարքում առաջնային նշանակություն են ստացել՝ գործազրկությանը, գյուղատնտեսական ապրանքների արտադրությանը և կապիտալի հոսքերին առնչվող հիմնահարցերը:

Վերոնշյալ զեկույցում մանրամասն վերլուծվում են առանձին երկրների տնտեսությունների մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումների վրա, ինչպես նաև առանձին տարածաշրջանների վերականգնման միտումները, այսինքն՝ դիտարկումները կատարվել են տարածաշրջանային և առանձին երկրների մակարդակներով:

2003[^]010թթ. ընթացքում աշխարհի ՀՆԱ-ն աճել է 37 տրլն դոլարից հասնելով 62 տրլնի, որը նշանակում է աշխարհի տնտեսությունն ունի բավականին արագ զարգացման տեմպեր: Ինչ վերաբերում է 2009 և 2010թթ. միջև ընկած ժամանակահատվածին, ապա հետաքրքիրն այն է, որ 2010թ. աշխարհի ՀՆԱ-ն արդեն իսկ դրամական արտահայտությամբ մոտ 1.7 տրլն դոլարով գերազանցել է 2008թ. մակարդակը: Դիտարկվող ժամանակաշրջանի առաջին կեսում աշխարհի ՀՆԱ-ն աճում էր տարեկան 3-4 տրլն դոլարով, իսկ վերջին մի քանի տարիներին այն մոտեցել էր 5-6 տրլն ԱՄՆ դոլարի աճի մակարդակին, այդ միտումը խախտվել է միայն

¹ ^օճճ Soonawխ Օսէխօե Ճթո1 2011, 7տոոխտոտ &օա էխո յ^օ-Sբտոժ 8.S^0VS1-7, Սոտաբ1օ^ատոէ, &աաօճատոտ, 8ՈՃ ^3բ^է31 Ոօ^տ
1նէՏաճօն31 1^օն6է31^ Բսնճ, 251 ք.